ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> մարտի 2013թվականի N 24 -Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՄԵԿ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՂԱԿԻ ԵՐԿՈՒ ԿԱՆԳԱՌՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ, ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԱԿՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի համայնքի ղեկավարին են դիմել համայնքի բնակիչներ Հասմիկ Հակոբյանը և Սոնա Խաչատրյանը՝ Ջինիշյան հիմնադրամի <<Քաղաքացիական երկխոսության և գործնական քայլեր>> ծրագրի շրջանակներում իրագործվելիք <<EXPRES>> ծրագրով նախատեսված Գյումրի քաղաքի Անկախության հրապարակի մեկ և Խաղաղության օղակի երկու կանգառների բարեկարգման, երթուղային տեղեկատվական ցուցանակների տեղադրման համար թույլտվություն և ֆինանսական աջակցություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով քաղաքացիներ Հ.Հակոբյանի և Ս.Խաչատրյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 11-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել քաղաքացիներ Հասմիկ Հակոբյանին և Սոնա Խաչատրյանին Գյումրի քաղաքի Անկախության հրապարակի մեկ և Խաղաղության օղակի երկու կանգառներում տեղադրել երթուղային տեղեկատվական ցուցանակներ:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լ.Ջիլավյանին՝ վերոգրյալ թվով 3(երեք) կանգառների բարեկարգման նպատակով, որպես ֆինանսական աջակցություն, քաղաքացիներ Հ.Հակոբյանին և Ս.Խաչատրյանին համայնքի 2013թվականի բյուջեի 10/7/1 գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական դասակարգման հոդվածից հատկացնել 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ.Հունանյան _____

Ն.Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե.Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

Տ.Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ